ՀԱՅԿԱԶԵՍՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՊԷՅՐՈՒԹ 1977 - 1978

АЖ 237
0826
25

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԳՈՒԼԷՃԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՒԱՔ

ՀԱՏՈՐ Զ.

Խմբագիր
ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ

ՊԷՅՐՈՒԹ, 1977

2387
276
Ա 57677

PUBLISHED BY THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN COLLEGE

HAIGAZIAN

ARMENOLOGICAL REVIEW

VOLUME 6

EDITOR
YERVANT H. KASSOUNY

BEIRUT, 1977

Տիրատուր Վարդապետը եւ նրա հանելուկները

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

Հանելուկների ժանրը եւս հայ դրականութեան պատմութեան մէջ շատ հին ծագում ունի։ Ակունքներն, անշուշտ, թաղուած են ժողովրդական բանահիւսութեան խորքերում։ Գրաւոր դպրութիւնից յայտնի անդրանիկ հանելուկները կապւում են Ե. դարի հեղինակ Դաւիթ փիլիսոփայի անուան հետ։ Կան մի շարք հանելուկներ էլ, որոնք առնչւում են Է. դարի մտածող Անանիա Շիրակացու դրական ժառանգութեանը։ Անվիճելի է «Խրախճանականք» կամ «Բախճանականք» խորագրով թուաբանական հանելուկների՝ նոյն հեղինակին պատկանելու իրողութիւնը։ Կան հին ժամանակների դրոշմ ունեցող այլ հանելուկներ եւս, որոնց հեղինակներն անյայտ են։

Այս աւանդների մեծագոյն զարգացնողն ու շարունակողը հանդիսացաւ ԺԲ. դարի գործիչ եւ բանաստեղծ Ներսէս Շնորհալին։ Զնայած տպագրիր աղբիւրներից նրա անուամբ յայտնի հանելուկների քանակը հասնում է շուրջ հարիւր յիսուն միաւորի, սակայն ձեռագրային վիճակները մտածել են տալիս այդ թիւը կրկնապատկելու մասին։

Ներսէս Շնորհալին ինչպէս «Ողբ Եդեսիոյ», «Վիպասանութիւն», «Խրատք» եւ այլ ստեղծագործութիւններով, այնպէս էլ հանելուկներով ստեղծեց իր ուղղութիւնը։ Նրանից յետոյ երեւան եկան մի շարք բանաստեղծներ (Յովհաննէս Մորմորեցի, Տիրատուր եւ այլն), որոնք հետեւելով Ներսէս Շնորհալուն, ստեղծեցին նորանոր հանելուկներ։ Ուշագրաւն այն է, որ վերջիններս նախընտրեցին Ներսէս Շնորհալու մշակած քառեակների ձեւն ու նամբական եր-

կանդամ 8-վանկանի ոտանաւորը։ Դրան զուգահեռ չմոռացուեց նաեւ Դաւիթ փիլիսոփայի եւ նրա յաջորդների մշակած ուղղութիւնը, ուր լչխում է ազատ եւ անյանգ բանաստեղծութիւնը։ Վերջինս երբեմն իրեն է ձգել ժողովրդական հանելուկների առանձին միաւորներ եւ հարստացել։

Միջնադարեան որոշ հեղինակներ ու գրիչներ, յաճախ միասին են ընդօրինակել նման հանելուկների տարբեր նմուշներ եւ ստեղծել խառն ու ընդարձակ շարքեր, իսկ յաճախ էլ՝ գրանք վերագրել Ներսէս Շնորհալուն։ Այս եղանակով ստեղծուել են հանելուկների խայտարղէտ եւ բազմապլուխ շարքեր։ Դրանց մի մասը տպագրուած է տարբեր պարբերականներում եւ գրքերում, իսկ միւս մասը մնացել է անտիպ, ուր զգալի քանակ են կազմում նորայայտ նմուշները։

Ինչպէս երեւում է այս ամփոփ խօսքից, ի դէմս մեր գրաւոր գրականութեան էջերում եւ տպագիր աղբիւրներում ցրիւ եկած հին ու միջնադարեան հանելուկների, ունենք հայ բանաստեղծութեան մի մեծարժէք հարստութիւն, որն իր ամբողջութեամբ դեռեւս հաւաքուած, ուսումնասիրուած եւ հրատարակուած չէ։

Մեր նպատակն է եղել, ի մի բերել այդ բոլորը՝ գիտա-քննական ընդարձակով եւ ամփոփ ուսումնասիրութեամբ։

Այս անգամ այդ ընդհանուր աշխատանքից տպագրութեան ենք ներկայացնում Ներսէս Շնորհալու յաջորդներից մէկի՝ Տիրատուր վարդապետի հանելուկները։

Մատենագրութեան մէջ քանիցս յիշուած է ոմն Տիրատուր վարդապետ՝ որպէս հանելուկների հեղինակ։ Մեզ ծանօթ առաջին յիշատակութիւնը գտնւում է «Բազմավէպ» ամսագրում, ուր նրա անունով տպագրուած է հետեւեալ հանելուկը.

Հինգն ասացին զինք՝ մեզ նըման,
Եւ ինքն ունի երկու բերան,
Բազում իրաց է նա նըման,
Կու մեռանի եւ է՛ կենդան (1)։

Յաջորդ անդամ Տիրատուր վարդապետին հանդիպում ենք Ղ. Ալիշանի «Ցուշիկք Հայրենեաց»ում, ուր յիշւում է, թէ նա իր հանելուկները գրել է Ներսէս Շնորհալու հանելուկների հետեւու-

---

1. «Բազմավէպ», Վենետիկ, 1850, էջ 160։ Այս հանելուկի պատասխանն է «լուսին» (նոյնը, էջ 224)։ «Բազմավէպ»ում այս եւ նման ուրիշ հանելուկները սակաւ առ սակաւ հրապարակ էր հանում Ղ. Ալիշանը՝ առանց իր անունը նշելու։

թեամբ։ Հեղինակի ապրած ժամանակն է համարում ԺԴ. դարը (2)։

Ղ. Ալիշանից յետոյ՝ Ղ. Յովհաննեսեանն է, որ ծանօթ է եղել Տիրատուր վարդապետի հանելուկներին։ Նա եւս Տիրատուր վարդապետին համարում է ԺԴ. դարի հեղինակ (3)։

Ըստ երեւոյթին նրանց օգտագործած հիմքը՝ Վենետիկի Մխիթարեանների Մատենադարանում պահուող թ. 244 «Ոսկեփորիկ» կոչուած ժողովածուն է, որ յետոյ նկարագրուեց Բ. Սարգիսեանի կազմած ձեռագրացուցակում։ Այն համարում է ԺԴ–ԺԵ. դարի ընդօրինակութիւն եւ, ի շարս ուրիշ նիւթերի, բովանդակում է Տիրատուր վարդապետի հանելուկները։ Բ. Սարգիսեանը մէջ է բերել այդ շարքի խորագիրը եւ առաջին հանելուկը։

«Տիեզերալոյս վարդապետին Տիր[ատրոյ] ասացեալ հանելուկք իմաստ.

Ինքն է միայն 'ւ ընկեր չունի,
Իւր զոյութիւնն յոյժ հրաշալի,
Ըստ հնգից ի վեր'ւ ի վայր շարժի
Եւ ըստ երկուց հաւասարի» (4)։

Ուրիշ տեղեկութիւններ՝ հանելուկներ դրող Տիրատուր վարդապետի մասին տպագիր աղբիւրներից՝ մեզ յայտնի չեն։ Ինչ վերաբերում է ձեռագիր աղբիւրներին, ապա ուշադրաւ են Մաշտոցի անուան Մատենադարանի թ. թ. 5118 եւ 3531 ձեռագրերը։ Դրանցից առաջինում հեղինակը կոչւում է Տիաս վարդապետ, իսկ երկրորդում՝ Տիրատուր վարդապետ։ Առաջինում հաւանաբար առկայ է «Տի» եւ «աս», սղուած բառերի միացումը, որոնք սկզբնապէս ներկայացրել են «Տիրատուր ասացեալ» դարձուածքը։

Տիրատուր վարդապետի մասին լրացուցիչ փաստեր չունենք։ Եղած տեղեկութիւնները՝ նշուած շարքերի խորագրերն են, որոնցից անհամեմատ պերճախօս է Վենետիկեան օրինակի խորագիրը. «Տիեզերալոյս վարդապետին Տի[րատրոյ] ասացեալ հանելուկք իմաստ.»։ Այստեղից պարզւում է, որ Տիրատուր վարդապետը եղել է հռչակաւոր դրծիչ, որին կոչել են «Տիեզերալոյս»։ Միաժամա-

---

2. Ղ. Ալիշան, *Յուշիկք Հայրենեաց Հայոց*, Ա. հտր., Վենետիկ, 1870, էջ 124։

3. Ղ. Յովհաննէսեան, *Հետազօտութիւնք Նախնեաց Ռամկօրէնի Վրայ*, Ա. հտր., Վենետիկ, 1897, էջ 61։

4. Բ. Սարգիսեան, *Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, Բ. հտր., 1924, էջ 651։

նակ պարզւում է նրա իմաստասիրական հակումը «հանելուկք իմաստ.» դարձուածքի օգնութեամբ, ուր վերջին բառը գրուած է կրճատ ձեւով (պէտք է լինի «իմաստասիրականք»)։ Ղ. Ալիշանի եւ Ղ. Յովհաննեանի նշումներն էլ, թէ նա ապրել է ԺԴ. դարում՝ աւելի քան կոնկրետացնում են ժամանակի ու հեղինակի մասին եղած կցկտուր, բայց խօսուն տեղեկութիւնները։ Այն հանգամանքը, որ վենետիկի ձեռագիրն ընդօրինակուած է ԺԴ–ԺԵ. դարերում եւ բովանդակում է ԺԴ. դարից առաջ ապրած հեղինակների ստեղծագործութիւններ, նորից բաւարար հիմք է Տիրատուր վարդապետին փնտռելու ԺԴ. կամ աւելի ճիշտ՝ ԺԳ–ԺԴ. դարերում։

Արդ, ո՞վ է այդ ժամանակ ապրած եւ գործած «Տիեզերալոյս Տիրատուր վարդապետը»։

Հ. Աճառեանն ի մի է խմբել իրեն յայտնի բոլոր միջնադարեան Տիրատուրներին եւ ստացել մի ընդարձակ շարք, ուր իշխող տեղը պատկանում է ԺԴ. դարին։ Զնայած մեծանուն դիտնականը ղդուշութեամբ կողք-կողքի է բերել տարբեր աղբիւրներից հաւաքած Տիրատուր անունով յայտնի հեղինակներին եւ գործիչներին, սակայն յատուկ քննութեան դէպքում նրանց մի մասը կարող է նոյնանալ։ Այս առումով ճիշտ է վարուել Լ. Խաչիկեանը՝ իր հրատարակած ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններում հանդիպող եւ 1309–1349 թուականներին գործած Տիրատուրներին դիտելով որպէս մի անձնաւորութիւն (5)։

Այդ հաշիւների հիմքում ընկած է այն իրողութիւնը, որ նշուած Տիրատուրները, չնչին բացառութեամբ, յիշատակւում են որպէս Գլաձորի եւ Հերմոնի վանքի ուսուցիչ-բարունապետեր, ուստի եւ ինքնաբերաբար նոյնացւում որպէս մի հեղինակ։ Եւ քանի որ այդ Տիրատուր վարդապետը դարասկզբին արդէն հասունացած մտաւորական է եղել, ուստի նրա ծնունդը պիտի որոնել նախորդ դարի երկրորդ կէսում, որով եւ նա կը ներկայանայ որպէս ԺԳ–ԺԴ. դարերի գործիչ։

Առանձնայատուկ խնդիր համարելով առհասարակ յայտնի բոլոր Տիրատուրներին միմիանցից զատելու եւ մեզ հետաքրքրող Տիրատուրին աւելի քան յատակ պատկերացնելու ծանր եւ օգտակար

---

5. Լ. Խաչիկեան, *ԺԴ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ*, Երեւան, 1950, էջ 754։ Տես նաեւ՝ էջ 60, 174, 294, 303, 378։ Նրան հետեւելով եւ նրա նշած փաստերը խօսեցնելով՝ խնդրին այդպէս է մօտեցել նաեւ Լ. Խաչերեանը։ Տես՝ Լ. Խաչերեան, *Գլաձորի Համալսարանը*, Երեւան, 1973, էջ 159–161։

դործը, մենք մեր ներկայ աշխատանքի կապակցութեամբ կը բաւարարուենք Լ. Խաչիկեանի կողմից ուրուագծուած վարդապետի կերպարով, համոզուած լինելով, որ հենց նոյն անձնաւորութիւնն է նաեւ հանելուկների հեղինակը։ Այսպէս մտածելու համար հիմք են տալիս հետեւեալ փաստերը.

ա) Հանելուկների հեղինակ Տիրատուր վարդապետի հանելուկների հին ընդօրինակութիւնը գտնուելով Վենետիկի թ. 244 ձեռագրում, որն ընդօրինակուած է ԺԴ–ԺԵ. դարերում, նրան ժամանակով առնչում է Գլաձոր–Հերմոնի վանքից յայտնի Տիրատուր վարդապետի հետ։

բ) Վենետիկի այդ նոյն ձեռագրում Տիրայր վարդապետի հանելուկներն ունեն այսպիսի խորագիր. «Տիեզերալոյս վարդապետին Տիր [ատրոյ] ասացեալ...»։ Այսպէս են խորագրուած նաեւ Գլաձորի եւ Հերմոնի ուսուցչապետ Տիրատուրի քարոզները՝ «Տիեզերաւոյս վարդապետին Տիրատրոյ ի բան Աւետարանին...» (6), կամ՝ «Տիեզերալոյս վարդապետին Տիրատրոյ արարեալ» (7)։

դ) Տիրատուր վարդապետը կոչւում է նաեւ իմաստասէր. նրա քարոզներում նկատւում է իմաստասիրական խորք ու ոճ։ Այդ հանգամանքը եւս նշուած է հանելուկների հին ընդօրինակութեան խորագրում. «... հանելուկք իմաստ» (այսինքն՝ «իմաստասիրականք»)։ Թիրաւի, այնտեղ կան այս առումով ուշագրաւ նմուշներ։ Օրինակ.

Զգալեացս ամէնն է պիտանի
Իւրաքանչիւր որքան տանի,
Բայց հակընդդէմ սոցա լինի,
Տեսակն յառաջ քան զնիւթ կազմի։

Կան ուրիշ փաստեր եւս, որոնք իրենց ամբողջութեամբ պէտք առայժմ համոզում են, թէ հանելուկների հեղինակ Տիրատուր վարդապետը՝ Եսայի Նշեցու ժամանակակից ու պաշտօնակից Տիրատուր վարդապետն է (8)։

---

6. Ձեռ. թ. 2178, թերթ 286 բ։

7. Նոյնը՝ թերթ 307 ա։

8. Այս Տիրատուրի մասին պահպանուած է հետեւեալ զրոյցը. «ԸզՏիրատուր Վարդապետն օր մի ի պաշտօն տարին, երբոր պատարագն արձակեցաւ, մոռացան տանել հաց նմա։ Երբոր երեկոյ եղեւ բերին զնա ի տուն եւ եդին յառաջն նորա սեղան, ասաց իշխանն, թէ՝ Քանի՞ տարոյ մարդ ես, վարդապետ։ Ասաց վարդապետն, թէ՝ Քառասուն տարուն մէկ օր պակաս։ Ասէ իշխանն. Ընդէ՞ր օր մի

Այժմ Տիրատուր վարդապետի հանելուկների մասին։ Վերեւում տեսանք, որ նրանք պահպանուել են երեք անտիպ ընդօրինակութիւններով։ Բ. Սարգիսեանը իր նկարագրութեան մէջ, նշում է, որ Վենետիկի թ. 244 ձեռագրում պահպանուած է քսան երկու հանելուկ (9)։

Մաշտոցի անուան Մատենադարանի վերոյիշեալ երկու ձեռագրերից իւրաքանչիւրում Տիրատուր վարդապետի հանելուկների շարքը բաղկացած է ոչ թէ քսան երկու, այլ քսան չորս միաւորներից։ Թւում է, թէ Վենետիկի ձեռագրում եւս պիտի երկու հանելուկներ լինեն, որոնց քանակը Բ. Սարգիսեանի հաշւումների ժամանակ հաւանաբար չփոթուած է։

Մաշտոցի անուան Մատենադարանի թ. 3531 ձեռագրում շարքի վերջում կան եւս երկու հանելուկներ, որոնք սակայն, խորթ են ընդհանուր շարքին։ Ահա դրանք.

Հիմքն չկայ, տունն երերի
Ի ինքն է վերան միասունի.
Տանիսն կոկ՝ զերդ զապիկի,
Առաստաղքն նման է քաղերքի։

Հայր իմ ծընաւ զիս ի մօրէ իմմէ,
Եւ դուստր իմ ծնաւ զմայր հօր իմոյ՝
Ի կնոջէ իմմէ։

Ինչպէս երեւում է, տուեալ ձեռագրի (թ. 3531) գրիչն այդ հանելուկը դտել է իր ձեռքի տակ եղած հիմք-օրինակում եւ դիտել որպէս Տիրատուր վարդապետի ստեղծագործութիւն։ Այլապէս նա դրանք կը զետեղէր հանելուկների յաջորդ շարքում, որ գրուած է «Այլուստ» խորագրի տակ։

Որ իսկապէս նշուած երկու հանելուկները խորթ են Տիրատուր վարդապետի շարքին, դա երեւում է ուրիշ ձեռագրերի մէջ

պակաս։ Ասաց. Զի այսօր կերակուր ոչ կերա, ի քիւ չի անկաներ...» (Ն. Եպս. Պողարեան, *Մայր Ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, Դ. հտր., Երուսաղէմ, 1969, էջ 250)։ Հաւանաբար այդ իշխանը ժամանակին յայտնի Սիւնեաց Բուրքել իշխանն է, որովհետեւ սոյն զրոյցին նախորդող ու յաջորդող զրոյցները կապուած են նրա հետ, իսկ Տիրատուր վարդապետն էլ նոյն կողմերումն էր ապրում եւ գործում։

9. Բ. Սարգիսեան, *նշ. աշխ.*, էջ 651։

պահպանուած տեղեկութիւններից։ Այսպէս, օրինակ, դրանցից առաջինը գտնում է նաեւ Մաշտոցի անուան Մատենադարանի թ. թ. 9071, 5624, 8575, 695, 541, 3218, 1558, 7035, 7703 ձեռագրերում, որոնք բոլորն էլ կրում են Ներսէս Շնորհալու անունը։ Լոկ վերջին ձեռագրումն է որ հեղինակի անունը պակասում է, այն էլ շարքի սկիզբը եւ խորագիրը կորած լինելու պատճառով։

Ինչ վերաբերում է «Հայր իմ ծնաւ զիս...» հանելուկին, ապա դա խորթ է ոչ միայն Տիրատուր վարդապետի, այլեւ Ներսէս Շնորհալու եւ առհասարակ նրա նմանութեամբ ստեղծագործած բոլոր հեղինակների հանելուկներին, որովհետեւ գրուած է ազատ բանաստեղծութեամբ։ Իսկ այդպիսիները կազմում են մի այլ խումբ, չնայած Ներսէս Շնորհալու հանելուկների շարքում եւս երբեմն հանդիպում ենք նրա հետեւեալ աւելի անաղարտ տարբերակին.

Հայր իմ ծընաւ զիս ի մօրէ իմմէ,
Եւ ես ծնայ զմայր որդոյ իմոյ,
Եւ որդիք իմ ծնան զմայր հօր իմոյ (10)։

Ուրիշ ձեռագրերում այս հանելուկը սկիզբ է հանդիսանում մի այլ ինքնատիպ շարքի (11), որ կոչւում է «Հանելուկք դիմակք» եւ վերագրուած է Անանիա Շիրակացուն (12)։ Այս վերագրումը չնայած կարիք է զգում փաստարկման, սակայն, միւս վկայութիւնների հետ միասին, միանգամայն անհաւանական է դարձնում նշուած հանելուկը՝ Տիրատուր վարդապետի հանելուկների թուին դասելու հարցը։

Պէտք է ցաւով նշել, որ մեր ձեռքի տակ եղած վերոյիշեալ շարքերից եւ ոչ մէկում հրապարակուող հանելուկների պատասխանները չկան։ Այդ բոլոր քսան չորս հանելուկներից մեզ յայտնի է լոկ երկուքի պատասխանը։ Մէկի մասին նշեցինք վերեւում՝ օգտուելով «Բազմավէպ»ի 1850 թուականի հրապարակումներից («լուսին»)։ Միւս նմուշը՝ «Կայր քաջ մի այլ նըման սմին...» հանելուկն է, որից վերեւ թ. 5118 ձեռագրում գրուած է «Տրդատ»։ Բ. Սարգիսեանի նկարագրութիւնից չի երեւում, արդեօք, Վենետիկեան ձե-

---

10. Ձեռ. թ. թ. 5624, 8575, 695, 8908 (վերջինը ոչ Ներսէս Շնորհալու անուամբ, այլ՝ անանուն)։

11. Տես՝ Ձեռ. թ. թ. 1770, 6097, 573, 713։

12. Ա. Աբրահամեան, Շիրակացու Մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 158–159։

ռագրում պատասխանները կա՞ն, թէ ոչ։ Եթէ չկան, հապա ի՞նչ հիման վրայ է Ղ. Ալիշանը «Բաղմավէպ»ում տպել նաեւ հրատարակուող հանելուկի պատասխանը. ի՞նքն է գուշակել, թէ օգտուել է մեզ անյայտ աղբիւրից։

Ըստ երեւոյթին Մաշտոցի անուան Մատենադարանի թ. 3531 ձեռագրում հանելուկների պատասխանները ժամանակին յատուկ եղանակով նշուած են եղել, սակայն չեն պահպանուել։ Այսպէս մտածելու հիմք են տալիս այդ ձեռագրում գտնուող շարքի միաւորներին ուղեկցող համարակալման թուատառերը։ Դրանք սկսւում են «ՄՏԶ»ից (256) եւ աւարտւում «ՄՀԹ»ով (279) (13)։ Դրանցից առաջ եւ յետոյ առկայ են հանելուկների ուրիշ շարքեր, որոնք բոլորը միասին ընդգրկուած են մի ընդհանուր համարակալման մէջ։ Նման դէպքերում այդ շարքերի ընդհանուր համարակալման համաձայն էլ կազմուած եւ կցուած է լինում պատասխանների ցանկ։ Տուեալ ձեռագրում, սակայն, այդ ցանկը չի պահպանուել, որովհետեւ հանելուկների սկզբի մասի թերթերը, այդ ցանկով հանդերձ, կտրուած եւ հանուած են։ Հաւանաբար նոյն հիմքից է նաեւ թ. 2961 (ԺԳ – ԺԴ. դարեր) ձեռագրի շարքը, որի սկիզբի մասը նոյնպէս կտրուած հանուած է, սակայն բարեբախտաբար, ցանկը պահպանուել է։

Մաշտոցի անուան Մատենադարանի վերոյիշեալ երկու ձեռագրերում պահպանուած շարքերը միանգամայն հարազատ են միմիանց եւ հնարաւորութիւն են տալիս կազմելու քննական ընդհանուր բնագիր։ Տարընթերցումները սակաւադէպ են եւ առանձին բարդութիւններ չեն ստեղծում ոչ իմաստային ոչ էլ հեղինակային պատկանելիութեան առումով։

Ուշադիր ընթերցումը ցոյց է տալիս, որ Տիրատուր վարդապետն իր հանելուկները, իրօք, դրել է Ներսէս Շնորհալու հետեւութեամբ։ Այսպէս, օրինակ, բոլոր միաւորներն էլ շարադրուած են քառատողերով, բացի մի նմուշից, որը բաղկացած է վեց տողից։ Տաղաչափութիւնը եւս նոյնն է՝ եամբական երկանդամ ութ վանկանի ոտանաւորը (4–4)։ Ցանգաւորման եղանակը եւս հարազատ է Ներսէս Շնորհալու հանելուկների յանգաւորմանը։ Երկու դէպքում էլ, որպէս կանոն, ամէն մի հանելուկ նոյնայանգ է (14)։ Լեզուն ու ո-

---

13. Աւելի ճիշտ՝ վերջին համարը «ՄՀԲ»ն է, բայց քանի որ վերջին 2 հանելուկներն օտար են, ուստի ՄՀԱ եւ ՄՀԲ հանելուկները նկատի չունենք։

Գրիչն էլ մոռացել է «Մ2» համարը եւ նրա տեղ գրել է «Մ2Ա»։

14. Տիրատուր վարդապետի հանելուկներից մէկը («Գիտեմ մի այլ...») շարադրուած է երկու տեսակի յանգերով։

ՏԸ նոյնպէս հոգեհարազատ են։ Նոյնը կարելի է ասել նաեւ հանելուկների ընդդրկման հարցերի եւ առհասարակ շարադրման եղանակի մասին։ Կան առանձին հանելուկներ, որոնք փաստօրէն գրուած են Ներսէս Շնորհալու որոշ հանելուկների թեմաներով։ Ցիշենք մի երկու օրինակ։

Ներսէս Շնորհալու մօտ կարդում ենք.

Մանուկ մի այլ ի յայս ներման
Էր ի յազգէն Արշակունեաց.
Հանչաք մանուկ էր ու իշխան,
Դ Եփրատ վազեաց քայլ մի լրման (15)։

Դրա համապատասխան Տիրատուր վարդապետը գրել է.

Այն քաջին ի՞նչ ասեմ ես գով,
Որ յաղթանդամ էր հասակով.
Զինուք վազեց նա զԵփրատով
Զքսաներկու կանգնոյ չափով։

Խօսքը Վարազդատի մասին է՝ վկայուած Մովսէս Խորենացու կողմից (16)։

Հետաքրքրական է, որ այս եղանակով, ինչպէս Ներսէս Շնորհալին, այնպէս էլ Տիրատուր վարդապետը գրել են մի քանի հանելուկներ Մովսէս Խորենացու նկարագրած տարբեր հերոսների վերաբերեալ։

Հրատարակութեան ներկայացնելով Տիրատուր վարդապետի հանելուկները, յոյս ունենք, որ նրա նկատմամբ աստիճանաբար կը ստեղծուի որոշ ուշադրութիւն եւ հրապարակ կը հանուեն նոր հետազօտութիւններ՝ նուիրուած նրա մանկավարժական եւ մատենագիտական գործունէութեանը։

---

15. Ներսէս Շնորհալի, *Բանք Զատաւ*, Վենետիկ, 1928, էջ 637։

16. Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Տփղիս, 1913, էջ 308։

ՏԻԵԶԵՐԱԼՈՅՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

ՏԻՐԱՏՐՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՀԱՆԵԼՈՒԿՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՔ

Ինքն է միայն 'ւ ընկեր չունի:
Իւր գոյութիւնն յոյժ հրաշալի,
Ըստ հնգից ի վեր 'ւ ի վայր շարժի
Եւ ըստ երկուց հաւասարի:

5 Զգալեացս ամէնն է պիտանի,
Իւրաքանչիւր որքան տանի·
Բայց հակընդդէմ սոցա լինի,
Տեսակն յառաջ քան զնիւթն կազմի:

Մերձ լինելով զիս սպանանէ,
10 Հեռի կալով զշունչըս քաղէ·
Ցէակքս ամէն ինքն մերձ է,
Աստուածութեանն յոյժ նըման է:

Մարդիկ յինքն յոյժ համարձակին,
Գազանք լռեն եւ դադարին·

ԱՂԲԻՒՐՆԵՐ

A *Ձեռ.* թ. 5118, *թերթ* 380բ–381, ժամանակ՝ 1412 թ.:

B *Ձեռ.* թ. 3531, *թերթ* 253ա–254բ, ժամանակ՝ 1670 թ.:

C Բ. Սարգիսեան, *Մայր ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, Բ. հտոր., 1924, էջ 651: ժամանակ՝ ԺԳ–ԺԴ. դդ.:

ԽՈՐԱԳԻՐ

A Տիեզերալոյս վարդապետին Տիրաս արարեալ հանեան:

B Տիրատուր վարդապետի ասացեալ (այսքան):

C Տիեզերալոյս վարդապետին Տիր [ատրոյ] ասացեալ հանելուկք իմաստ:

ԲՆԱԳԻՐ

2	A իր գոյութիւնն:		
3	ու ի վայր:	B ւ չիք:	
5	Ագալեաց է չիք:	Զգալեաց:	C Զիք շարունակութիւն:
7	հակառակ ընդդէմ:		
8	զնիւթ:		
11	ամէնն:	յինքն:	
13		Մարդիկք:	
14		դադարեն:	

15 Արուեստքն ամէն նովաւ լինին,
Եւ հոմանուն է ինք Փրկչին:

Հինքն ասացին զինք՝ մեզ նման,
Եւ ինքն ունի երկու բերան.
Բազում իրաց է նա նշան,
20 Կու մեռանի եւ է՛ կենդան:

Տնտեսք երեք են կենդանոյն,
Կենդանութեան մընալ ի նոյն.
Պատնառք ջերմին եւ թանալուն,
Զլով կապող զշաղկապ օդոյն:

25 Բան մի զարմացք ի մեզ լինի,
Բայց անվարժիցն անգիտելի.
Զի նոխութեամբքն նուազի
Եւ նուազութեամբքն նոխ լինի:

Ոմանք ստեղծան մաքուր հոգի,
30 Կէսք զոյացան զուտ զգալի.
Ի մէջ սոցա մին կենդանի,
Որ զերկոցունց յինքեան ունի:

Պարզեաւ էառ սա յատկագոյն,
Որ երկոցունց է գերագոյն.
35 Հոգոյն տվաւ վասն մարմնոյն,
Մարմինն էառ վասն հոգոյն:

Է արարիչ 'ւ աստուած չէ նա,
Արեստաւոր ու սարված չունի նա.
Ինքն ի յամէն էակս կա
40 Եւ է անտես 'ւ ի յայտ չգա:

---

17 Հինք:
23 ջերմին...ն (եղծուած է):
24 շաղկապ:
30 զոյտ փխ. զուտ: սգալի:
38 սավրած չունինա:
39 Էակս:

Է զգալի եւ չերեւի,
Չէ կենդանի ու կու խօսի·
Թէ ոք ընդդէմ նորա խօսի՝
Զնոյնն առնէ պատասխանի:

45 Է թիւ բոլոր քառանկիւնի,
Ինքն ի յինքեան շրջապատի·
Երկու տեսակ յինքեաց ունի,
Մինն ի միոյն ոչ շփոթի,
Եւ է պայման լուսոյ լուսնի
50 Եւ պաշտման քահանայի:

Այն քաջին ի՞նչ ասեմ ես գով,
Որ յաղթանդամ էր հասակով·
Զինուք վազեց նա զԵփրատով՝
Զքսաներկու կանգնոյ չափով:

55 Կայր քաջ մի այլ նման սմին,
Որ Յելլադա ի կրկեսին
Թափեաց զեղջիւր երկու ցլին
Եւ զարմացումն հանդիսին:

Գիտեմ քաջ մ այլ նախնի սոցին,
60 Որ ի Պոնդոս յեզր ի ծովին
Զմխեալ նիզակն իւր զերկսայրին
Ի խոր նստոյց յորձաքարին:

---

41 սգալի:
45 քառանգիւնի:
49 լուսնոյ լուսին:
51 ես չիք·
54 զ ԻՔ: ունի պատասխան՝ «Տրդատ», որ վերաբերում է հաւանաբար յաջորդ հանելուկին (55–58րդ տողեր)։
56 կիրկիսին: կրկիսին:
57 Բ ցեվին փխ· երկու ցլին:
60 յեզր ծովին:

Ումն էր յազգէ Արշակունի,
Մայրն վաւաշ եւ խիստ մոլի.
65 Տեսումն աչացն էր անբարի,
Հանց որ յաղթէր որձաբարի:

Արք երեք են հրաշալիք,
Որք եւ բազմաց են ցանկալիք,
Որոց խօսել են ամուսինք
70 Ցեզր ջրոյն, յոր փափաքեն կենդանիք:

Խորհուրդ չորրորդն յոյժ սոսկալի,
Որ յաստուծոյ հօրէ շարժի.
Եկեալ յեզրէ արեւդանի
Հարսնխօսի զեկեղեցի:

75 Ցերիս ծընունդս է պատուած,
Ցոքունց բազմաց գերազանցած,
Ի ջրոյ, ի հրոյ եւ ի վիմաց,
Թո՛ղ զառաջինն, որ ի ծնողաց:

Գիտեմ մի այլ յոյժ գերազանց,
80 Ծնընդեամբ երեք է մեծարած,
Շնորհօք յերկնէ եւ ի կուսէ
Եւ ըստ բնութեանն, որ ի մօրէ:

Վեհին մեծի էր ընտանող՝,
Զարմանալեաց հրաշագործող.
85 Հրոյ եւ ջրոյ էր արգելող,
Վիմաց ընման ջրի հոսող:

---

69 խօսել:
71 ցանկալի փխ. սոսկալի:
72 հուրէ փխ. հօրէ:
73 ի յեզրէ:
76 Ցոգունց: գերազանցաց:
77 Ի ջրոյ, հրոյ:
82 բնութեան Ե որ:
86 հողող:

Զընթացս երկնից դադարեցոյց
Ի ցոյց վիրացն, որ ողջացոյց,
Զակն տուրընչեան յետըս դարձոյց,
90 Զչափ աւուրն մեծացոյց:

Ում մարգարէն երեւ նշան՝
Ցամի ծնաւ նա մեռասան.
Թէպէտ գործովք էր անպատկան,
Բայց ծնունդն սուրբ եւ պատուական:

95 Զմարգարէն սուրբ տեսանող
Նախսածայնեաց ազգին սպանող.
Նա իւր ազինն եղեւ դաւող,
Ցեռ իւրն երթող բազում կոծող:

---

90 Ըզչափաւորըն:
92 մեծ տասան:
98 B օրինակն ունի եւս երկու տուն, որոնք Տիրատուր վարդապետինը չեն (տես վերեւում):

TIRATOUR VARDABET AND HIS RIDDLES

A. SH. MENADZAKANIAN

(Summary)

The roots of Armenian riddles are part of Armenian folklore. The greatest developer of riddles in the Armenian literature was Nerces Shnorhali, the 12th century poet, in whose steps and imitation Armenian poets of the following centuries wrote new riddles. One of the followers of N. Shnorhali was 13–14th century author and head master of Glatzor–Hermon monastery-school Tiratour Vardabet, whose riddles are brought into light by the author of the article and are published for the first time.